

## **ԹԻՎ 4 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4-ՐԴ ՀԵՐԹ)» ՆԱԽԱԳԾԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ԿԻՑ**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ** միջազգային կազմակերպությունը, որն ստեղծվել է իր գործունեությունն է իրականացնում Ռուսաստանի Դաշնության Եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ 2006 թվականի հունվարի 12-ին կնքված «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի հիման վրա, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, 050051, Դոստիկ պող., 220 հասցեում, Կայունացման Եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչն է Եւ հանդես է գալիս դրա մասնակիցների անունից Եւ հանձնարարությամբ՝ ղեկավարվելով «Կայունացման Եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրով Եւ «Կայունացման Եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրով, ինչպես նաեւ Կայունացման Եւ զարգացման եվրասիական հիմնադրամի խորհրդի 2009 թվականի հունիսի «09»-ի որոշմամբ, այսուհետ՝ **Կառավարիչ,**

Եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, **այսուհետ՝** Ստացող,

կնքեցին Եվրասիական զարգացման բանկի Եւ Հայաստանի Հանրապետության միջեւ «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» ծրագրի ֆինանսավորման համար «Կայունացման Եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի

տրամադրման մասին» 2015 թվականի ապրիլի 14-ի համաձայնագրին (այսուհետ՝ **Համաձայնագիր**) կից սույն՝ թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ **թիվ 4 լրացուցիչ համաձայնագիր**) հետեւյալի մասին.

1. Թիվ 4 լրացուցիչ համաձայնագրում օգտագործվող եզրույթները եւ սահմանումներն ունեն նույն նշանակությունը, ինչ որ Համաձայնագրում:

2. Համաձայնագրի 2.2 կետը լրացնել հետեւյալ պարբերություններով.

«Ներդրումային վարկի ստացման նպատակով Ստացողը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական գանձապետարանում բացում եւ վարում է Համաձայնագրի 4.1 (ժ) կետում նշված՝ Ծրագրի իրականացման խմբի անունով առանձին հաշվեհամար վարկի արժույթով՝ Կառավարչի համար բավարար պայմաններով, ներառյալ՝ ցանկացած հայցից, բռնագրավումից, կալանքից կամ ոչ նպատակային օգտագործումից հաշվի պատշաճ պաշտպանության ապահովումը (այսուհետ՝ Հատուկ հաշվեհամար):

Հատուկ հաշվեհամարին Ներդրումային վարկի միջոցների հաշվեգրումը եւ Հատուկ հաշվեհամարից միջոցների ծախսումն իրականացվում են Համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ Կառավարչի կողմից սահմանված միջոցների ծախսման ընթացակարգերին համապատասխան:»:

3. Համաձայնագրի 4.1 կետի (գ) ենթակետի երկրորդ պարբերությունը հանել:

4. Համաձայնագրի 4.1 կետի (գ) ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ) Ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար սեփական բյուջեից բավարար ծավալով հատկացումների ամենամյա տրամադրումը (համաֆինանսավորում)՝

- Համաձայնագրի թիվ 4 հավելվածին համապատասխան ծախսերի՝ ըստ «Ստացողի բյուջեին» դասված կատեգորիաների,

- Համաձայնագրի թիվ 4 հավելվածի 5-րդ կետով նախատեսված ծախսերի,
- Ստանդարտ պայմանների 2.03 բաժնում նշված հարկերի վճարման համար նախատեսված ծախսերի.»:

5. Համաձայնագրի 4.1 (ժ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժ) Ստացողի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան ծրագրի իրականացման խմբի՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կամ դրա իրավահաջորդի (այսուհետ՝ **Ծրագրի իրականացման խումբ** կամ **ԾԻԽ**) ներգրավումը Համաձայնագրի թիվ 5 հավելվածի 3-րդ կետին համապատասխան՝ ապահովելով Ծրագրի իրականացման գծով վերապահված գործառույթների կատարումը ԾԻԽ մասնագետների կողմից, որոնց կոմպետենտության մակարդակը թույլ է տալիս արդյունավետորեն իրականացնել Ծրագիրը՝ Համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված քաղաքականություններին եւ ընթացակարգերին համապատասխան, ԾԻԽ-ի գործունեությունը Ծրագրի իրականացման եւ վերջնական հաշվետվությունների ներկայացման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաեւ վերապահված գործառույթների կատարման համար ԾԻԽ-ին անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը.»:

6. Համաձայնագրի թիվ 2 հավելվածի «Համաձայնագրի շրջանակներում կիրառվող կանոնները եւ ընթացակարգերը» բաժնում առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«- Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում գնումների քաղաքականություն (հաստատված է Հիմնադրամի խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ, թիվ 42 արձանագրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով եւ լրացումներով (այսուհետ՝ **Գնումների վերաբերյալ Հիմնադրամի քաղաքականություն**):»:

7. Համաձայնագրի թիվ 4 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

## «Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները եւ ծախսերի կատեգորիաները

1. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները եւ ծախսերի կատեգորիաները ներառում են հետեւյալը.

Ծախսերի կատեգորիաները	Հատկացված գումարը (ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ընդհանուր գումարից մասնաբաժինը
<b>Ներդրումային վարկը</b>		
(1) Ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգման աշխատանքներ	135.000.000,00 (հարյուր երեսունհինգ միլիոն)	66% (առանց հարկերի)
(2) Ծրագրի մանրամասն նախագծի պատրաստման ծառայություններ, ինժինեռինգի ոլորտում եւ աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության ծառայություններ	8.150.000,00 (ութ միլիոն հարյուր հիսուն հազար)	100% (առանց հարկերի)
(3) ԾԻԽ-ի գործառնական ծախսեր	900.000,00 (ինը հարյուր հազար)	100% (առանց հարկերի)
(4) Չնախատեսված ծախսեր	5.950.000,00 (հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար)	100% (առանց հարկերի)
<b>Ստացողի բյուջեն</b>		
(1) Ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգման աշխատանքներ	71.575.000,00 (յոթանասունմեկ միլիոն հինգ յոթանասունհինգ հազար)	34% (առանց հարկերի)
(5) Ծրագրի նպատակներով հող վերցնելը եւ վերաբնակեցումը՝ պաշտպանական միջոցներին առնչվող ԱԶԲ-ի քաղաքականության պահանջներին համապատասխան	15.106.000,00 (տասնհինգ միլիոն հարյուր վեց հազար)	100% (առանց հարկերի)

Ընդամենը՝	236.681.000,00 (երկու- հարյուր երեսունվեց միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար)	
-----------	---	--

2. Համաձայնագրի նպատակներով ԾԻԽ-ի Գործառնական ծախսեր ասելով (ծախսերի (3) կատեգորիայի շրջանակներում) պետք է հասկանալ Ծրագրի իրականացման մասով ԾԻԽ-ի ծախսերը, այդ թվում՝ աշխատակիցների աշխատանքի վարձատրությունը, գրասենյակի պահպանության, տրանսպորտային միջոցների շահագործման եւ տեխնիկական սպասարկման ծախսերը, կոմունալ ծախսերը, հաղորդակցության ծախսերը, տեղեկատվական համակարգերի եւ սարքավորումների պահպանության ծախսերը, շահագործման ծախսերը, թարգմանչական ծախսերը, փոստային ծախսերը, գործուղումների ծախսերը, տպագրական ծախսերը եւ այլ ողջամիտ ծախսեր, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման ժամանակ ԾԻԽ-ի գործունեության ապահովման համար՝ Կառավարչի հետ համաձայնեցված Գործառնական ծախսերի բյուջեին համապատասխան:

3. Համաձայնագրի նպատակներով չնախատեսված ծախսեր ասելով (ծախսերի (4) կատեգորիայի շրջանակներում) պետք է հասկանալ ծախսերի (1), (2) եւ (3) կատեգորիաների մասով հիմնավորված թույլատրելի ծախսերը ծածկելու համար նախատեսված պահուստը՝ ծախսերի տվյալ կատեգորիաներից ցանկացածի մասով ներդրումային վարկի միջոցներն ամբողջությամբ ընտրելու դեպքում:

4. Ծախսերի (1) կատեգորիայով միջոցներն առաջին հերթին ծախսվում են ներդրումային վարկի միջոցներից, եւ միայն ներդրումային վարկի միջոցներն ամբողջությամբ ծախսվելուց հետո (1) կատեգորիայով միջոցները ծախսվում են Ստացողի բյուջեի միջոցներից:

5. Ստացողը պարտավորվում է ֆինանսավորել Ծրագրի մասով ցանկացած այլ լրացուցիչ ծախս, որը կարող է առաջանալ դրա իրականացման ընթացքում, եւ

ավելացնել Համաձայնագրի շրջանակներում դրա ֆինանսավորման ընդհանուր գումարը:»:

6. Համաձայնագրի թիվ 5 հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

**«Ծրագրի նկարագրությունը եւ իրականացման կարգը**

1. Ծրագրի նպատակը. Հայաստանի Հանրապետությունում «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի՝ Ագարակից դեպի Քաջարան մոտ 32 կիլոմետր հատվածի թողունակության բարձրացում եւ վթարայնության նվազեցում:

2. Ծրագիրը բաղկացած է հետեւյալ երկու բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Հայաստանի Հանրապետությունում «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի՝ Ագարակից դեպի Քաջարան մոտ 32 կիլոմետր երկարությամբ հատվածի շինարարություն, այդ թվում՝

- ա) ավտոմոբիլային ճանապարհի շինարարության աշխատանքներ,
- բ) ծրագրի մանրամասն նախագծի պատրաստման եւ ինժինեռինգի ոլորտում ծառայություններ,
- գ) շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ,
- դ) շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ:

Բաղադրիչ 2. Ծրագրի կառավարում. ԾԻԽ-ի գործունեության եւ աջակցման ապահովում՝ Ծրագրի իրականացման գծով աշխատանքների կատարման ամենօրյա համակարգման եւ Համաձայնագրի պայմաններին համապատասխան մոնիթորինգի իրականացման հարցում:

3. Ստացողը Ծրագրի իրականացումը եւ Համաձայնագրի պայմանների կատարումն ապահովում է իր գործադիր իշխանության մարմինների եւ

կազմակերպությունների միջոցով՝ նրանց վրա դնելով Ստացողի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան Համաձայնագրի պայմանների կատարման պատասխանատվությունը, մասնավորապես՝

3.1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (կամ նրա իրավահաջորդի) վրա է դրվում Համաձայնագրի պայմաններին համապատասխան Ծրագրի իրականացման պատասխանատվությունը.

3.2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (կամ նրա իրավահաջորդի) վրա է դրվում վարկի մասով վճարումներն ամբողջությամբ եւ ժամանակին կատարելու, Համաձայնագրի պայմաններին համապատասխան ԾԻԽ-ի անունով Հատուկ հաշվեհամար բացելու, վարելու եւ դրա կարգավիճակն ապահովելու, ինչպես նաեւ Համաձայնագրին համապատասխան համաֆինանսավորման համար միջոցները ժամանակին տրամադրելու պատասխանատվությունը.

3.3. Ծրագրի իրականացման խմբի՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (կամ նրա իրավահաջորդի) վրա է դրվում Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատվությունը, ներառյալ՝ ֆինանսների կառավարումը, գնումները, հաշվառման վարումը, միջոցների նպատակային ծախսումը, արդյունավետության մոնիթորինգը եւ գնահատումը, ֆինանսական հաշվետվությունների եւ Համաձայնագրով նախատեսված Ծրագրին առնչվող այլ հաշվետվությունների ձեւավորումը եւ տրամադրումը, արտաքին աուդիտորների ներգրավումը, բնապահպանական եւ սոցիալական պատասխանատվության ոլորտի եւ Համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված՝ կիրառելի այլ քաղաքականությունների եւ ընթացակարգերի պահանջների կատարումը:»:

9. Համաձայնագրի թիվ 6 հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

**«Ծրագրի մոնիթորինգը եւ գնահատումը**

1. Ստացողը պետք է իրականացնի Ծրագրի կատարման ու դրա նպատակների ապահովման մոնիթորինգ եւ գնահատում՝ մոնիթորինգի հետեւյալ ցուցանիշներին համապատասխան.

Համարը	Ցուցանիշը	Չափման միավորը
1.	Ուղեւորատար եւ բեռնատար տրանսպորտի երթելիության միջին օրական ինտենսիվությունը «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի հատվածով (Ագարակի եւ Մեղրու լեռնանցքի տակ նախատեսված ապագա թունելի հարավային պորտալի միջեւ)	Միավոր/օրական (հաշվի առնելով սեզոնը)
2.	Տեղաշարժվելու համար ծախսվող ժամանակը «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի հատվածով (Ագարակի եւ Մեղրու լեռնանցքի տակ նախատեսված ապագա թունելի հարավային պորտալի միջեւ)	Ժամերը (հաշվի առնելով սեզոնը)
3.	Վթարայնության մակարդակը «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի վերակառուցված հատվածում (Ագարակի եւ Մեղրու լեռնանցքի տակ նախատեսված ապագա թունելի հարավային պորտալի միջեւ) (ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը)	Վթարների քանակը/ամսական (հաշվի առնելով սեզոնը)

2. Ստացողը պետք է պատրաստի եւ Կառավարչին ներկայացնի Ծրագրի մոնիթորինգի արդյունքների ամփոփմամբ հաշվետվությունները, որոնք ձեռով եւ բովանդակությամբ բավարար են Կառավարչի համար, ներառյալ՝

2.1. Յուրաքանչյուր կիսամյակ՝

ա) Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունները՝ հաշվետու ժամանակահատվածի համար եւ աճողական հանրագումարով՝ Ծրագրի միջոցառումների իրագործման փաստացի եւ պլանավորված ժամկետների միջեւ տարբերությունների պարզաբանմամբ եւ Ծրագրի արդյունավետ կատարումն ու դրա նպատակների իրագործումն ապահովելու նպատակով հաջորդող ժամանակահատվածում իրականացման համար առաջարկվող միջոցների



ներկայացմամբ.

բ) Ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների արժեքներին հասնելու առաջընթացի մասին հաշվետվությունները՝ հաշվետու ժամանակահատվածի համար եւ աճողական հանրագումարով՝ Ծրագրի արդյունավետ կատարումն ու դրա նպատակների իրագործումն ապահովելու նպատակով հաջորդող ժամանակահատվածում իրականացման համար առաջարկվող միջոցների ներկայացմամբ.

գ) Ծրագրի շրջանակներում Գնումների պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ աճողական հանրագումարով՝ կատարողականի փաստացի եւ պլանավորված ցուցանիշների միջեւ տարբերությունների պարզաբանմամբ.

դ) միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝

- միջոցների աղբյուրների եւ օգտագործման մասին հաշվետվությունը,
- ըստ Ծրագրի միջոցառումների միջոցների օգտագործման մասին հաշվետվությունը,
- Հատուկ հաշվեհամարից քաղվածքը,
- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
- Հատուկ հաշվեհամարի հավասարակշռված հաշվեկշիռը,
- ծախսերի ամփոփագիրը.

ե) առաջնային հաշվառման փաստաթղթերը (ապրանքների եւ ծառայությունների մատակարարների հետ պայմանագրերի, հաշիվ-վավերագրերի, ակտերի, ամփոփագրերի, վճարումների ռեեստրների եւ այլնի պատճենները), որոնցով հաստատվում են թույլատրելի ծախսերը՝ 30 000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլարից ավելի գումարի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնման պայմանագրերով:

Առաջին այդպիսի հաշվետվությունները, որոնք նշված են «ա»-«ե» ենթակետերում, պետք է Կառավարչին ներկայացվեն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջին օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան 45 (քառասունհինգ) օրացուցային օր հետո: Հետագայում նշված հաշվետվությունները Կառավարչին պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից 45 (քառասունհինգ) օրացուցային օր հետո: Վերջին հաշվետվությունները Կառավարչին պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի օրվանից 45 (քառասունհինգ) օրացուցային օր հետո:

Ստացողի գրավոր դիմումի հիման վրա «ա»-«ե» ենթակետերում նշված հաշվետվությունների տրամադրման պարբերականության փոփոխությունը կարող է համաձայնեցվել Կառավարչի կողմից՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, եւ ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

2.2. Ստացողն ապահովում է Ստացողի միջոցների հաշվին կատարված ծախսերը հաստատող առաջնային հաշվառման բոլոր փաստաթղթերի պահպանումը (ներառյալ պայմանագրերը, ակտերը, հաշվետվությունները, հաշիվները, հաշիվ-վավերագրերը, ապրանքագրերը, ստացականները եւ այլ փաստաթղթեր) մինչեւ ստորեւ նշված ժամկետներից այն ժամկետի լրանալը, որն ավելի ուշ է վրա հասնելու՝

- մեկ տարի՝ Կառավարչի կողմից Ծրագրի այն ժամանակահատվածի համար աուդիտորների ստուգած ֆինանսական հաշվետվություններն ստանալուց հետո, որի ընթացքում կատարվել է ներդրումային վարկի միջոցների վերջին հատկացումը.

- երկու տարի՝ վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի օրը վրա հասնելուց հետո. Կառավարչի ներկայացուցիչներին տրամադրում է

հաշվառման փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորություն:

Նշված ժամկետի ընթացքում Ստացողը Կառավարչի ներկայացուցիչներին տրամադրում է այդ հաշվառման փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորություն:

### 2.3. Ծրագրի ավարտից հետո՝

- Ծրագրի ավարտի վերաբերյալ վերջնական հաշվետվությունը՝ Ստանդարտ պայմանների 4.03 բաժնի «դ» ենթակետի դրույթներին համապատասխան:

3. Ստացողը պետք է Կառավարչի հետ համատեղ ուսումնասիրի վերոնշյալ հաշվետվությունները եւ հետագայում ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ծրագրի արդյունավետ ավարտը եւ դրա նպատակների իրագործումն ապահովելու համար՝ հաշվի առնելով վերը նշված հաշվետվություններում տեղ գտած եզրակացություններն ու առաջարկությունները եւ տվյալ հարցի վերաբերյալ Կառավարչի կարծիքները:»:

10. Համաձայնագրի թիվ 7 հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

### **«Գնումների ընթացակարգերը**

1. Ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ:

Ստացողն ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներն իրականացնում է 4-րդ հավելվածում նշված ծախսերի (1), (2), (4) եւ (5) կատեգորիաներով ներդրումային վարկի միջոցների հաշվին՝ Գնումների վերաբերյալ Հիմնադրամի քաղաքականությանը, Ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներին առնչվող ՎԶՄԲ ուղեցույցին համապատասխան՝ Գնումների վերաբերյալ Հիմնադրամի քաղաքականությանը չհակասող մասով, եւ Գնումների պլանին համապատասխան:

Գնումների կիրառելի մեթոդներն են՝

1.1. Միջազգային մրցակցային մրցույթը: Մրցույթը Ստացողի կողմից պետք է անցկացվի Ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցի «Միջազգային մրցակցային մրցույթ» 2-րդ բաժնի դրույթներին համապատասխան՝ անկախ այն հանգամանքից, թե քանի պայմանագիր (մեկ կամ մի քանի փոխկապակցված պայմանագիր) է կնքվելու եւ անկախ այդ պայմանագրերից յուրաքանչյուրի գումարից, ու մրցույթի՝ Ծրագրի շրջանակներում Գնումների պլանով նախատեսված լինելու դեպքում:

1.2. Ազգային մրցակցային մրցույթը: Մրցույթը Ստացողի կողմից պետք է անցկացվի Ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցի «Ազգային մրցակցային մրցույթ» 3.3-3.4 բաժինների դրույթներին համապատասխան՝ անկախ այն հանգամանքից, թե քանի պայմանագիր է կնքվելու՝ մեկ կամ մի քանի փոխկապակցված պայմանագիր, եւ անկախ այդ պայմանագրերից յուրաքանչյուրի գումարից, ու մրցույթի՝ Ծրագրի շրջանակներում Գնումների պլանով նախատեսված լինելու դեպքում:

1.3. Գնումներ ազատ առետրում: Պետք է անցկացվեն Ստացողի կողմից Ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցի «Գնումներ ազատ առետրում» 3.5 բաժնի դրույթներին համապատասխան՝ Ծրագրի շրջանակներում Գնումների պլանով նախատեսված լինելու դեպքում:

## 2. Խորհրդատվական ծառայությունների գնումները:

Ստացողն իրականացնում է խորհրդատվական ծառայությունների գնումները ներդրումային վարկի միջոցների հաշվին՝ Գնումների պլանին համապատասխան:

Խորհրդատվական ծառայությունների գնումների կիրառելի մեթոդներն են՝

2.1. Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրությունը, որն Ստացողի կողմից պետք է անցկացվի Խորհրդատուների ընտրության եւ վարձման վերաբերյալ

ՎՋՄԲ ուղեցույցի «Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրություն» 2-րդ բաժնի դրույթներին համապատասխան.

2.2. Խորհրդատուների որակավորման վրա հիմնված ընտրությունը, որն Ստացողի կողմից պետք է անցկացվի Խորհրդատուների ընտրության եւ վարձման վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցի «Խորհրդատուների որակավորման վրա հիմնված ընտրություն» 3.7 բաժնի դրույթներին համապատասխան.

2.3. Անհատ խորհրդատուների ընտրությունը, որն Ստացողի կողմից պետք է անցկացվի Խորհրդատուների ընտրության եւ վարձման վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցի «Անհատ խորհրդատուների ընտրություն» 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

3. Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորվող կոնկրետ պայմանագրով գնումների կիրառելի մեթոդը նշվում է Գնումների պլանում:

4. Կիրառելի տիպային մրցութային փաստաթղթերը ՎՋՄԲ տիպային մրցութային փաստաթղթերն են:

5. Ծրագրի շրջանակներում գնումների իրականացման նկատմամբ վերահսկողության նպատակով Կառավարիչն օգտագործում է նախնական կամ հետագա ուսումնասիրության ընթացակարգերը՝ Գնումների վերաբերյալ Հիմնադրամի քաղաքականությանը, Խորհրդատուների ընտրության եւ վարձման վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցին, Ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ ՎՋՄԲ ուղեցույցին եւ Գնումների պլանին համապատասխան:

6. Կառավարիչն իրավունք ունի կիրառելու Գնումների վերաբերյալ Հիմնադրամի քաղաքականությամբ նախատեսված պատժամիջոցներ՝ Ստացողի կողմից դրանում նշված խախտումներ թույլ տալու դեպքում:

7. Անկախ ՎՋՄԲ կիրառվող ուղեցույցների դրույթներից՝ աշխատանքների գնումների իրականացման ժամանակ ստացված առաջարկների գնահատման ժամանակ Ստացողը պետք է 5 տոկոսանոց արտոնություն տրամադրի ԿԶԵՀ

մասնակից պետություններից գնման մասնակիցների առաջարկների համար (հաշվի առնելով նրանց գրանցման երկիրը, սեփականատերերի կազմը եւ ԿԶԵՀ մասնակից չհանդիսացող պետություններից ներգրավվող ենթակապալի ծավալը): Այդպիսի արտոնություն ստանալուն կոնսորցիումը կարող է հավակնել միայն այն դեպքում, եթե դրա կազմի մեջ մտնում են բացառապես Հիմնադրամի մասնակից պետություններից գնումների մասնակիցները (հաշվի առնելով նրանց գրանցման երկիրը, սեփականատերերի կազմը եւ ԿԶԵՀ մասնակից չհանդիսացող պետություններից ներգրավվող ենթակապալի ծավալը):»:

11. Համաձայնագրի թիվ 8 հավելվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

#### **«Միջոցների հատկացման ընթացակարգերը**

1. Միջոցների հատկացման ընթացակարգերին վերաբերող հարցերում Ստացողը եւ Կառավարիչը Համաձայնագրին չհակասող մասով կիրառում են հետեւյալ փաստաթղթերի ձեւերն ու դրույթները՝

- Համաշխարհային բանկի հաճախորդներին միջոցների տրամադրման տեղեկագիրք, 2006 թվականի մայիս՝ հաշվի առնելով հետագա լրացումները եւ փոփոխությունները (Disbursement Handbook for World Bank clients, May 2006).

- Ծրագրերի իրականացման համար Համաշխարհային բանկի կողմից միջոցների տրամադրման ուղեցույց, 2006 թվականի մայիսի 1՝ հաշվի առնելով հետագա լրացումները եւ փոփոխությունները (World Bank Disbursement Guidelines for Projects, dated May 1, 2006): Կառավարիչն իրավունք ունի կիրառելու նշված փաստաթղթերով նախատեսված իրավական հետեւանքները, եթե Ստացողի կողմից թույլ են տրվել դրանցում նշված խախտումները: Կառավարիչը Ստացողին կարող է ծանուցել նշված փաստաթղթերի առավել թարմ, արդիական խմբագրությունների կիրառման անհրաժեշտության մասին:

2. Ներդրումային վարկի միջոցների հատկացումն Ստացողին իրականացվում է՝

2.1. Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարման ենթակա ակնկալվող ծախսերի մասով Ստացողին ավանսավորման մեթոդով՝ ներդրումային վարկի միջոցները Հատուկ հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Ավանսավորման մեթոդը կարող է կիրառվել բացառապես Ծրագրի 1-ին բաղադրիչի «դ» մասով եւ 2-րդ բաղադրիչով, եթե Կառավարչի կողմից այլ բան համաձայնեցված չէ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, եւ ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

2.2. Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարման ենթակա պայմանագրերի գծով մատակարարներին կատարվող ուղղակի վճարումների մեթոդով:

2.3. Ներդրումային վարկի այն միջոցների հաշվին վճարման ենթակա ծախսերի՝ Ստացողին փոխհատուցման մեթոդով, որոնք Ստացողի կողմից նախապես ծախսվել են սեփական ռեսուրսների հաշվին:

3. Ներդրումային վարկի առավելագույն գումարը, որը կարող է առկա լինել Հատուկ հաշվեհամարի վրա (**այսուհետ՝ առավելագույն մնացորդ**), կազմում է 1.000.000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար:

Հատուկ հաշվեհամարին միջոցների հատկացման հայտի առավելագույն գումարը հաշվարկվում է որպես առավելագույն մնացորդի եւ Հատուկ հաշվեհամարին ավելի վաղ փոխանցված՝ Ստացողի կողմից փաստաթղթերով չհաստատված գումարի տարբերություն:

Առավելագույն մնացորդի գումարի փոփոխությունը կարող է համաձայնեցվել Կառավարչի կողմից Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, եւ ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

4. Միջոցների հատկացման համապատասխան հայտով որպես միջոցների

նպատակային օգտագործումը հաստատող՝ Ստացողի կողմից ներկայացվելու ենթակա փաստաթղթերն են՝

4.1. ավանսավորման մեթոդով միջոցների հատկացման հայտերի դեպքում (Հատուկ հաշվեհամարի համալրման համար)՝ Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2.1 կետի «դ» եւ «ե» ենթակետերին համապատասխան այն փաստաթղթերը, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են կա՛մ Հատուկ հաշվեհամարին միջոցներ հատկացնելու հայտի կազմում, կա՛մ նախապես՝ Ծրագրի վերաբերյալ այն հաշվետվությունների կազմում, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2.1 կետին համապատասխան:

4.2. ուղղակի վճարման մեթոդով միջոցների հատկացման հայտերի դեպքում՝ առաջնային հաշվառման փաստաթղթերի պատճենները (ապրանքների եւ ծառայությունների մատակարարների հետ պայմանագրերի, հաշիվ-վավերագրերի, ակտերի, ամփոփագրերի, վճարումների ռեեստրների եւ այլնի պատճենները), որոնցով հաստատվում են թույլատրելի ծախսերը, եւ այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք կարող են հիմնավորված կերպով պահանջվել Կառավարչի կողմից:

4.3. Ստացողին ծախսերի փոխհատուցման մեթոդով միջոցների հատկացման հայտերի դեպքում՝ Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2.1 կետի «դ» եւ «ե» ենթակետերին համապատասխան այն փաստաթղթերը, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են կա՛մ Հատուկ հաշվեհամարին միջոցների հատկացման հայտի կազմում, կա՛մ նախապես՝ Ծրագրին առնչվող այն հաշվետվությունների կազմում, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2.1 կետին համապատասխան:

Միջոցների հատկացման հայտի կազմում ներառված փաստաթղթերի ցանկը կարող է փոփոխվել Կառավարչի հետ համաձայնեցմամբ՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, եւ ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:



5. Ստացողը պարտավոր է Կառավարչին վերադարձնել ներդրումային վարկի՝ Հատուկ հաշվեհամարին ավանսավորված միջոցները, որոնց նպատակային օգտագործումը Ստացողի կողմից փաստաթղթերով չի հաստատվել ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից հետո 4 (չորս) ամսվա ընթացքում:

6. Միջոցների հատկացման հայտի նվազագույն գումարը կազմում է 100 000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար:

7. Ուղղակի վճարման մեթոդով միջոցների հատկացման հայտով պետք է նախատեսվի վճարում մեկ կոնտրագենտի:

8. Սույն հավելվածով սահմանված շեմային արժեքների փոփոխությունը կարող է համաձայնեցվել Կառավարչի կողմից՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին եւ 10.04 բաժնին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, եւ ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:»:

12. Սույն թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրն ստորագրվել է 2022 թվականի նոյեմբերի «17»-ին, ռուսերենով՝ հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ՝ Կառավարչին եւ Ստացողին:

13. Սույն թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի 8.4 կետով նախատեսված կարգով եւ ուժի մեջ մտնելուց հետո Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում:

**ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝**

Տ. Ա. Խաչատրյան

ՀՀ ֆինանսների նախարար

**ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ՝**

Շիրոկով Ա.Գ.

ԿԶԵՀ-ի նախագծային բլոկի գործադիր տնօրեն

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի ապրիլի 14-ին ստորագրված «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**



**ДОПОЛНИТЕЛЬНОЕ СОГЛАШЕНИЕ №4**  
**К СОГЛАШЕНИЮ О ПРЕДОСТАВЛЕНИИ ИНВЕСТИЦИОННОГО КРЕДИТА**  
**ИЗ СРЕДСТВ ЕВРАЗИЙСКОГО ФОНДА СТАБИЛИЗАЦИИ И РАЗВИТИЯ**  
**ДЛЯ ФИНАНСИРОВАНИЯ ПРОЕКТА «СТРОИТЕЛЬСТВО АВТОДОРОЖНОГО**  
**КОРИДОРА «СЕВЕР-ЮГ» (4 ОЧЕРЕДЬ)»**  
**МЕЖДУ**  
**ЕВРАЗИЙСКИМ БАНКОМ РАЗВИТИЯ**  
**И**  
**РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ**

**ЕВРАЗИЙСКИЙ БАНК РАЗВИТИЯ**, международная организация, созданная и осуществляющая свою деятельность на основании Соглашения об учреждении Евразийского банка развития, заключенного 12 января 2006 года между Российской Федерацией и Республикой Казахстан, штаб-квартира которого расположена по адресу: Республика Казахстан, г. Алматы, 050051, пр. Достык, 220, являющийся Управляющим средствами Евразийского фонда стабилизации и развития и выступающий от имени и по поручению его участников, руководствуясь Договором об учреждении Евразийского фонда стабилизации и развития от 09 июня 2009 года и Соглашением об управлении средствами Евразийского фонда стабилизации и развития от 09 июня 2009 года, в дальнейшем именуемый **Управляющий**,

и **РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**, в дальнейшем именуемая **Получатель**,

заключили настоящее Дополнительное соглашение №4 (далее — **Дополнительное соглашение №4**) к Соглашению от 14 апреля 2015 года о предоставлении инвестиционного кредита из средств Евразийского фонда стабилизации и развития для финансирования проекта "Строительство автодорожного коридора "Север-Юг" (4 очередь)" между Евразийским банком развития и Республикой Армения (далее — **Соглашение**) о нижеследующем:

1. Термины и определения, используемые в Дополнительном соглашении № 4, имеют то же значение, что и в Соглашении.

2. Пункт 2.2 Соглашения дополнить следующими абзацами:

«Для целей получения инвестиционного кредита Получатель открывает и ведет отдельный счет в Валюте кредита в Центральном Казначействе Республики Армения на имя Группы реализации проекта, упомянутой в пункте 4.1 (к) Соглашения, на условиях, удовлетворительных для Управляющего, включая обеспечение надлежащей защиты счета от каких-либо исков, конфискации, арестов или нецелевого использования (далее — «Специальный счет»).

Зачисление средств Инвестиционного кредита на Специальный счет и расходование средств со Специального счета осуществляется в соответствии с установленными Управляющим процедурами расходования средств, упомянутыми в Приложении №8 к Соглашению.».

3. Второй абзац подпункта в) пункта 4.1 Соглашения исключить.

4. Подпункт е) пункта 4.1 Соглашения изложить в следующей редакции:

«е) выделение ежегодно из своего бюджета достаточного объема ассигнований для финансирования расходов по Проекту (Софинансирование):

- расходов в соответствии с Приложением №4 к Соглашению по категориям, отнесенным к «Бюджету Получателя»,
- расходов, предусмотренных пунктом 5 Приложения №4 к Соглашению,
- расходов для оплаты Налогов, упомянутых в Разделе 2.03 Стандартных условий;»

5. Подпункт к) пункта 4.1 Соглашения изложить в следующей редакции:

«к) привлечение в соответствии с порядком, установленным законодательством Получателя, группы реализации проекта – Фонда «Дорожный департамент» или его правопреемника (далее – **Группа реализации Проекта** или **ГРП**) в соответствии с пунктом 3 Приложения №5 к Соглашению, обеспечив: выполнение возложенных функций по реализации Проекта специалистами ГРП, уровень компетентности которых позволяет эффективно реализовывать Проект в соответствии с политиками и процедурами, указанными в Приложении №2 к Соглашению; функционирование ГРП в течение всего периода реализации и предоставления итоговых отчетов по Проекту; а также предоставление ГРП ресурсов, необходимых для выполнения возложенного функционала.»

6. В разделе «Правила и процедуры, применяемые в рамках Соглашения» приложения №2 к Соглашению, первый абзац изложить в следующей редакции:

«- Политика закупок по проектам, финансируемым из средств Евразийского фонда стабилизации и развития (утверждена решением Совета Фонда от 21 ноября 2018 г., протокол № 42) со всеми последующими изменениями и дополнениями (далее – «**Политика закупок Фонда**»).»

7. Приложение №4 к Соглашению изложить в следующей редакции:

#### **«Источники финансирования Проекта и категории расходов**

1. Источники финансирования Проекта и категории расходов включают:

<b>Категории расходов</b>	<b>Выделенная сумма (в долларах США)</b>	<b>Доля от общей суммы финансирования расходов</b>
<b>Инвестиционный кредит:</b>		
(1) Работы по реконструкции автомобильной дороги	135.000.000,00 (Сто тридцать пять миллионов)	66% (за исключением Налогов)
(2) Услуги по подготовке детального дизайна проекта, услуги в области инжиниринга и надзора за выполнением работ	8.150.000,00 (Восемь миллионов сто пятьдесят тысяч)	100% (за исключением Налогов)

Категории расходов	Выделенная сумма (в долларах США)	Доля от общей суммы финансирования расходов
(3) Операционные расходы ГРП	900.000,00 (Девятьсот тысяч)	100% (за исключением Налогов)
(4) Непредвиденные расходы	5.950.000,00 (Пять миллионов девятьсот пятьдесят тысяч)	100% (за исключением Налогов)
<b>Бюджет Получателя:</b>		
(1) Работы по реконструкции автомобильной дороги	71.575.000,00 (Семьдесят один миллион пятьсот семьдесят пять тысяч)	34% (за исключением Налогов)
(5) Изъятие земли и переселение в целях Проекта в соответствии с требованиями Политики АБР по защитным мерам	15.106.000,00 (Пятнадцать миллионов сто шесть тысяч)	100% (за исключением Налогов)
<b>Итого:</b>	236.681.000,00 (Двести тридцать шесть миллионов шестьсот восемьдесят одна тысяча)	-

2. Для целей Соглашения под Операционными расходами ГРП (в рамках категории расходов (3)) понимаются расходы ГРП по реализации Проекта, в том числе оплата труда сотрудников, содержание офиса, расходы по эксплуатации и техническому обслуживанию транспортных средств, коммунальные расходы, коммуникационные расходы, расходы по поддержке информационных систем и содержанию оборудования, эксплуатационные расходы, расходы на перевод, почтовые расходы, расходы на командировки, полиграфические расходы и другие разумные расходы, необходимые для обеспечения функционирования ГРП при реализации Проекта, в соответствии с бюджетом Операционных расходов, согласованным с Управляющим.
3. Для целей Соглашения под Непредвиденными расходами (в рамках категории расходов (4)) понимается резерв для покрытия обоснованных Приемлемых расходов по категориям расходов (1), (2) и (3) в случае полной выборки средств Инвестиционного кредита по любой из данных категорий расходов.
4. Расходование средств по категории расходов (1) в первую очередь производится из средств Инвестиционного кредита, и только после того, как средства Инвестиционного кредита полностью израсходованы, расходование средств по категории расходов (1) производится из средств Бюджета Получателя.
5. Получатель обязуется финансировать любые другие дополнительные расходы по Проекту, которые могут возникнуть в процессе его реализации и превысить общую сумму его финансирования в рамках Соглашения».
8. Приложение №5 к Соглашению изложить в следующей редакции:

## «Описание и порядок реализации Проекта»

1. Цель Проекта: повышение пропускной способности и снижение аварийности на участке автодорожного коридора «Север-Юг» около 32 километров от Агарака в сторону Каджарана в Республике Армения.
2. Проект состоит из двух компонентов:

Компонент 1. Строительство автодорожного коридора «Север-Юг» протяженностью около 32 километров от Агарака в сторону Каджарана в Республике Армения, в том числе:

  - а) Работы по строительству автомобильной дороги;
  - б) Услуги по подготовке детального дизайна проекта и в области инжиниринга;
  - в) Услуги по техническому надзору за строительными работами;
  - г) Услуги по авторскому надзору за строительными работами.

Компонент 2. Управление проектом: обеспечение функционирования и поддержки ГРП в ежедневной координации выполнения работ по реализации Проекта и в осуществлении мониторинга в соответствии с условиями Соглашения.
3. Получатель обеспечивает реализацию Проекта и выполнение условий Соглашения через свои органы исполнительной власти и организации, возлагая на них ответственность за выполнение условий Соглашения в соответствии с порядком, установленным законодательством Получателя, в том числе:
  - 3.1. на Министерство территориального управления и инфраструктур Республики Армения (или его правопреемника) возлагается ответственность за реализацию Проекта в соответствии с условиями Соглашения.
  - 3.2. на Министерство финансов Республики Армения (или его правопреемника) возлагается ответственность за полноту и своевременность осуществления Платежей по кредиту, за открытие на имя ГРП, ведение и обеспечение статуса Специального счета в соответствии с условиями Соглашения, а также за своевременное предоставление средств для Софинансирования в соответствии с Соглашением.
  - 3.3. на Группу реализации Проекта – Фонд «Дорожный департамент» (или её правопреемника) возлагается ответственность за ежедневную работу по реализации Проекта, включая управление финансами, закупки, ведение учёта, целевое расходование средств, мониторинг и оценка эффективности, формирование и предоставление финансовой отчётности и другой предусмотренной Соглашением отчётности по Проекту, привлечение внешних аудиторов, выполнение требований в области экологической и социальной ответственности и других применимых политик и процедур, указанных в приложении №2 к Соглашению.».

9. Приложение №6 к Соглашению изложить в следующей редакции:

**«Мониторинг и оценка Проекта»**

1. Получатель должен осуществлять мониторинг и оценку выполнения Проекта и достижения его целей в соответствии со следующими показателями мониторинга:

№	Показатель	Единица измерения
1.	Средняя суточная интенсивность движения пассажирского и грузового транспорта по участку транспортного коридора «Север-Юг» (между Агараком и южным порталом будущего тоннеля под Мегринским перевалом)	Единиц/в сутки (с учётом сезона)
2.	Время, затрачиваемое на перемещение по участку транспортного коридора «Север-Юг» (между Агараком и южным порталом будущего тоннеля под Мегринским перевалом)	Часы (с учетом сезона)
3.	Уровень аварийности (количество дорожно-транспортных происшествий) на реконструированном участке транспортного коридора «Север-Юг» (между Агараком и южным порталом будущего тоннеля под Мегринским перевалом)	Количество аварий/месяц (с учетом сезона)

2. Получатель должен подготавливать и представлять Управляющему отчеты с обобщением результатов мониторинга Проекта, удовлетворяющие Управляющего по форме и содержанию, включая:

2.1. Каждое полугодие:

- а) Отчеты о ходе реализации Проекта за отчетный период и нарастающим итогом с объяснением различий между фактическими и запланированными сроками реализации мероприятий Проекта и изложением мер, рекомендуемых для осуществления в течение последующего периода в целях обеспечения эффективного выполнения Проекта и достижения его целей;
- б) Отчеты о прогрессе в достижении значений показателей мониторинга Проекта за отчетный период и нарастающим итогом, с изложением мер, рекомендуемых для осуществления в течение последующего периода в целях обеспечения эффективного выполнения Проекта и достижения его целей;
- в) Отчеты о выполнении Плана закупок по Проекту нарастающим итогом по состоянию на конец отчетного периода с объяснением различий между фактическими и запланированными показателями выполнения.
- г) Промежуточные финансовые отчеты, включающие:
  - отчет об источниках и использовании средств;
  - отчет об использовании средств по мероприятиям Проекта;
  - выписку со Специального счета,
  - отчет о финансовом положении,
  - уравновешенный баланс Специального счета;

– расходную ведомость.

- д) Первичные учетные документы (копии контрактов с поставщиками товаров и услуг, инвойсов, актов, ведомостей, реестров платежей, документы об оплате (если применимо) и т.п.), подтверждающие Приемлемые расходы, по контрактам на закупку товаров, работ и услуг на сумму более 30 000 (Тридцати тысяч) долларов США.

Первые отчеты, указанные в подпунктах а) – д), должны быть представлены Управляющему не позднее чем через 45 (Сорок пять) календарных дней после окончания первого после Даты вступления в силу календарного полугодия. В последующем указанные отчеты должны представляться Управляющему не позднее, чем через 45 (Сорок пять) календарных дней после окончания каждого календарного полугодия в течение всего периода реализации Проекта. Последние отчеты должны быть представлены Управляющему не позднее, чем через 45 (сорок пять) календарных дней после Даты окончания периода доступности Инвестиционного кредита.

Изменение периодичности предоставления отчетов, указанных в подпунктах а) – д), может быть согласовано Управляющим на основании письменного обращения Получателя путем направления Управляющим Получателю уведомления в соответствии с Разделом 10.01 и Разделом 10.04 Стандартных условий и вступает в силу с даты указанного уведомления.

- 2.2. Получатель обеспечивает хранение всей первичной учетной документации, подтверждающей расходы, произведенные за счет средств Получателя (включая контракты, акты, отчеты, счета, счета-фактуры, накладные, квитанции и другие документы), до истечения того из следующих сроков, который наступит позднее:
- одного года после получения Управляющим проверенной аудиторами финансовой отчетности по Проекту, охватывающей период, в течение которого была произведена последняя выдача средств Инвестиционного кредита;

- двух лет после наступления Даты окончания периода доступности кредита. предоставляет представителям Управляющего возможность изучать учетную документацию.

В течение указанного срока Получатель предоставляет представителям Управляющего возможность изучать такую учетную документацию.

- 2.3. По завершении Проекта:
- Окончательный отчет о завершении Проекта в соответствии с положениями подпункта г) Раздела 4.03 Стандартных условий.

3. Получатель должен совместно с Управляющим рассматривать вышеуказанные отчеты и в дальнейшем принимать все необходимые меры для обеспечения эффективного завершения Проекта и выполнения его целей, с учетом выводов и рекомендаций вышеупомянутых отчетов и мнения Управляющего по этому вопросу.»



10. Приложение №7 к Соглашению изложить в следующей редакции:

### **«Процедуры закупок»**

1. Закупки товаров, работ и неконсультационных услуг.

Получатель осуществляет закупки товаров, работ и неконсультационных услуг за счет средств Инвестиционного кредита по категориям расходов (1), (2), (4) и (5), указанных в Приложении 4, в соответствии с Политикой закупок Фонда, Руководством по закупкам товаров, работ и неконсультационных услуг МБРР в части, не противоречащей Политике закупок Фонда, и Планом закупок.

Применимыми методами закупок являются:

- 1.1. Международные конкурсные торги. Торги должны быть проведены Получателем в соответствии с положениями Раздела 2 “Международные конкурсные торги” Руководства по закупкам товаров, работ и неконсультационных услуг МБРР вне зависимости от того, сколько контрактов будет заключено (один или несколько взаимосвязанных контрактов) и независимо от суммы каждого из таких контрактов, и, если торги предусмотрены Планом закупок по Проекту;
- 1.2. Национальные конкурсные торги. Торги должны быть проведены Получателем в соответствии с положениями Разделов 3.3 – 3.4 “Национальные конкурсные торги” Руководства по закупкам товаров, работ и неконсультационных услуг МБРР вне зависимости от того, сколько контрактов будет заключено – один или несколько взаимосвязанных контрактов и независимо от суммы каждого из таких контрактов, и, если торги предусмотрены Планом закупок по Проекту;
- 1.3. Закупки в свободной торговле. Должны быть проведены Получателем в соответствии с положениями Раздела 3.5 “Закупки в свободной торговле” Руководства по закупкам товаров, работ и неконсультационных услуг МБРР, если это предусмотрено Планом закупок по Проекту.

2. Закупки консультационных услуг.

Получатель осуществляет закупки консультационных услуг за счет средств Инвестиционного кредита в соответствии с Планом закупок.

Применимыми методами закупок консультационных услуг являются:

- 2.1. Отбор на основе качества и стоимости, который должен быть проведен Получателем в соответствии с положениями Раздела 2 «Отбор на основе качества и стоимости» Руководства по отбору и найму консультантов МБРР;
- 2.2. Отбор по квалификации консультантов, который должен быть проведен Получателем в соответствии с положениями Раздела 3.7 «Отбор по квалификации консультантов» Руководства по отбору и найму консультантов МБРР;
- 2.3. Отбор индивидуальных консультантов, который должен быть проведен Получателем в соответствии с положениями Раздела 5 «Отбор индивидуальных консультантов» Руководства по отбору и найму консультантов МБРР.

3. Применимый метод закупок по конкретному контракту, финансируемому из средств Инвестиционного кредита, указывается в Плане закупок.
4. Применимая типовая конкурсная документация - типовая конкурсная документация МБРР.
5. В целях контроля за осуществлением закупок по Проекту Управляющий использует процедуры предварительного или последующего рассмотрения в соответствии с Политикой закупок Фонда, Руководством по отбору и найму консультантов МБРР, Руководством по закупкам товаров, работ и неконсультационных услуг МБРР и Планом закупок.
6. Управляющий вправе применить санкции, предусмотренные Политикой закупок Фонда при допущении Получателем указанных в ней нарушений.
7. Вне зависимости от положений применимых Руководств МБРР при проведении оценки Предложений, полученных при проведении Закупок Работ, Получатель должен предоставлять 5-процентную льготу Предложениям Участников закупки из государств-участников ЕФСР (с учетом страны их регистрации, состава собственников и объема привлекаемого субподряда не из государств-участников ЕФСР). Консорциум может претендовать на получение такой льготы, только если в его состав входят исключительно Участники закупок из государств-участников Фонда (с учетом страны их регистрации, состава собственников и объема привлекаемого субподряда не из государств-участников ЕФСР).».
11. Приложение №8 к Соглашению изложить в следующей редакции:

#### **«Процедуры выдачи средств**

1. В вопросах процедур выдачи средств Получатель и Управляющий применяют в части, не противоречащей Соглашению, формы и положения:
  - Справочника по предоставлению средств для клиентов Всемирного банка, май 2006 года с учетом дальнейших дополнений и изменений (Disbursement Handbook for World Bank Clients, May 2006);
  - Руководства Всемирного банка по предоставлению средств на реализацию проектов от 1 мая 2006 года с учетом дальнейших дополнений и изменений (World Bank Disbursement Guidelines for Projects, dated May 1, 2006).Управляющий вправе применить последствия, предусмотренные указанными документами, при допущении Получателем указанных в них нарушений. Управляющий может уведомить Получателя о необходимости применения более поздних актуальных редакций указанных документов.
2. Выдача средств Инвестиционного кредита Получателю осуществляется:
  - 2.1. Методом авансирования Получателю ожидаемых расходов, подлежащих оплате за счет средств Инвестиционного кредита, путем перечисления средств Инвестиционного кредита на Специальный счет. Метод авансирования может использоваться исключительно по части г) Компонента 1 и по Компоненту 2 Проекта, если иное не согласовано Управляющим на основании письменного

обращения Получателя путем направления Управляющим Получателю уведомления в соответствии с Разделом 10.01 и Разделом 10.04 Стандартных условий и вступает в силу с даты указанного уведомления.

- 2.2. Методом прямых платежей поставщикам по контрактам, подлежащим оплате за счет средств Инвестиционного кредита.
- 2.3. Методом возмещения расходов Получателю, подлежащих оплате за счет средств Инвестиционного кредита, которые были предварительно потрачены Получателем за счёт собственных ресурсов.
3. Максимальная сумма Инвестиционного кредита, которая может находиться на Специальном счете (далее - "**Максимальный остаток**"), составляет 1.000.000 (Один миллион) долларов США.

Максимальная сумма Заявки на выдачу средств на Специальный счет рассчитывается как разница между Максимальным остатком и ранее перечисленной на Специальный счет суммой, не подтвержденной Получателем документально.

Изменение суммы Максимального остатка может быть согласовано Управляющим на основании письменного обращения Получателя путем направления Управляющим Получателю уведомления в соответствии с Разделом 10.01 и Разделом 10.04 Стандартных условий и вступает в силу с даты указанного уведомления.


4. В качестве документов, подтверждающих целевое использование средств по соответствующей Заявке на выдачу средств, которые должны быть представлены Получателем, являются:
  - 4.1. для Заявок на выдачу средств методом авансирования (для пополнения Специального счета) – документы в соответствии с подпунктами г) и д) пункта 2.1 Приложения №6 к Соглашению, предоставляемые Получателем либо в составе Заявки на выдачу средств на Специальный счет, либо заблаговременно в составе отчетности по Проекту, предоставляемой Получателем в соответствии с пунктом 2.1 Приложения №6 к Соглашению.
  - 4.2. для Заявок на выдачу средств методом прямого платежа – копии первичных учетных документов (копии контрактов с поставщиками товаров и услуг, инвойсов, актов, ведомостей, реестров платежей и т.п.), подтверждающие Приемлемые расходы, и иные дополнительные документы, которые могут быть обоснованно затребованы Управляющим.
  - 4.3. для Заявок на выдачу средств методом возмещения расходов Получателю – документы в соответствии с подпунктами г) и д) пункта 2.1 Приложения №6 к Соглашению, предоставляемые Получателем либо в составе Заявки на выдачу средств на Специальный счет, либо заблаговременно в составе отчетности по Проекту, предоставляемой Получателем в соответствии с пунктом 2.1 Приложения №6 к Соглашению.

Перечень документов в составе Заявки на выдачу средств может быть изменен по

согласованию с Управляющим на основании письменного обращения Получателя путем направления Управляющим Получателю уведомления в соответствии с Разделом 10.01 и Разделом 10.04 Стандартных условий, и вступает в силу с даты указанного уведомления.

5. Получатель обязан вернуть Управляющему средства Инвестиционного кредита, авансированные на Специальный счет, целевое использование которых не подтверждено Получателем документально в течение 4 (Четырех) месяцев после Даты окончания периода доступности Инвестиционного кредита.
6. Минимальная сумма Заявки на выдачу средств, составляет 100.000 (сто тысяч) долларов США.
7. Заявка на выдачу средств методом прямого платежа должна предусматривать платеж одному контрагенту.
8. Изменение пороговых значений, установленных настоящим приложением, может быть согласовано Управляющим на основании письменного обращения Получателя путем направления Управляющим Получателю уведомления в соответствии с Разделом 10.01 и Разделом 10.04 Стандартных условий и вступает в силу с даты указанного уведомления.»
12. Настоящее Дополнительное соглашение №4 подписано "17" ноября 2022 года на русском языке в двух подлинных экземплярах, имеющих одинаковую юридическую силу, по одному для Управляющего и Получателя.
13. Настоящее Дополнительное соглашение №4 вступает в силу в порядке, предусмотренном пунктом 8.4 Соглашения, и после вступления в силу является неотъемлемой частью Соглашения.

**ЗА ПОЛУЧАТЕЛЯ**



Хачатрян Т.А.  
Министр финансов  
Республики Армения

**ЗА УПРАВЛЯЮЩЕГО**



Широков А.Г.  
Исполнительный директор  
Проектного блока ЕФСР

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի ապրիլի 14-ին ստորագրված «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետ՝**

